ՀԱՎԵԼՎԱԾ

«Երևանի պետական համալսարան»

հիմնադրամի ռեկտորի

2024 թ. հոկտեմբերի 31-ի

թիվ 210/47-Լ հրամանի

ԵՊՀ ԻՄ ստորաբաժանման 2025թ.-ի գործունեության վերաբերյալ ղեկավարի հաշվետվություն

Ստորաբաժանում՝ Կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժին

Բաժնի վարիչ՝ Ա.Մակարյան

Ժամանակահատված՝ 2025թ. հունվարից դեկտեմբեր

Ներկայացման ամսաթիվ՝ 07.03.2026թ.

Իջևան 2026

(ըստ ԵՊՀ ԻՄ զարգացման 2025-30թթ.ՌԾ-ի 2025թ.-ի գործողությունների պլանի)

	Խնդիրներ		Գործողություններ	
Նպատակ	Խնդիրների կոդեր	քանակ	Գործողությունների կոդեր	քանակ
1	1.2,	1	1.2.9,	1
2	2.1, 2.4	2	2.1.1, 2.4.1	2
4	4.2, 4.4	2	4.2.1, 4.4.1	2
5	5.3	1	5.3.3	1
6	6.2, 6.3, 6.4	3	6.2.1, 6.2.2, 6.3.1, 6.3.2, 6.4.1, 6.4.2, 6.4.3	7
Ընդամենը		9		13

Նշենք, որ Կրթական բարեփոխումների և որակի ապահովման (ԿԲՈԱ) բաժինը ձևավորվել է ԵՊՀ ԻՄ կառուցվածքային փոփոխությունների արդյունքում: Այն կազմավորվել է մասնաճյուղի կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի և մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի միավորման արդյունքում: Որից հետո նորաստեղծ բաժնի համար մշակվել է բաժնի նոր կանոնակարգ, որը հաստատվել է գիտական խորհրդի 22.07.2025թ.-ի թիվ 82 նիստում:

Կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժինը՝ ըստ ԵՊՀ ԻՄ 2025-30թթ. զարգացման ռազմավարական պլանի, 2025թ.-ի համար մշակել էր գործողությունների պլան, որը ներառել է 16 գործողություններ:

Որպես հաջողություններ պետք է նշել, որ բաժինը հաշվետու 2025թ.-ի ընթացքում առաջնորդվելով հաստատված գործողությունների պլանով հիմնականում իրականացրել է իր առջև դրված բոլոր գործընթացները՝ ձեռք բերելով պլանով ամրագրված ակնկալվող արդյունքները: Բոլոր գործողությունների շրջանակներում մշակվել են անհրաժեշտ փաստաթղթերը, ձևաչափերը, տարբեր ձևաչափերով իրականացվել են համապատասխան ուսումնասիրություններ, կատարվել են հավաքագրված արդյունքների վերլուծություններ:

Բաժինը խորհրդատվություններով մշտապես աջակցել է բոլոր ուսումնական և վարչական ստորաբաժանումներին՝ ռազմավարական պլանավորման, գործընթացների մոնիթորինգի, արդյունքների վերլուծության հարցերում:

Բաժնի հաջողությունները պայմանավորված են բաժնի վարիչի հստակ ուղղորդումներով և թիմային աշխատանքով:

Բաժնի կողմից մշակված փաստաթղթերը, ձևաչափերը, հարցաշարերը, առաջարկները և այլն միտված են մասնաճյուղի և նրա ստորաբաժանումների գործունեության արդյունավետության հետագա բարելավմանը:

Նշենք, որ որոշ գործողությունների իրականացման շրջանակներում ոչ բոլոր արդյունքներն են վերջնական տեսքով ձեք բերվել: Դրանց մի մասը կախված է ԵՊՀ ոչ ամբողջությամբ իրականացրած գործընթացներից (գործողություն 4.2.1), որոնք պետք է տեղայնացվեին կամ կիրարկվեին

մասնաճյուղում: Մշակվել են փաստաթղթեր, որոնք կամ խմբագրման փուլում են, կամ առայժմ չեն ներկայացվել գիտական խորհուրդ՝ հաստատման և այլն:

Ձեռքբերումների և բացթողումների մասին կներկայացնենք՝ մանրամասն վերլուծելով ըստ գործողությունների պլանի յուրաքանչյուր գործողության շրջանակներում բաժնի աշխատակազմի իրականացրած գործընթացները: Թերի կատարված, կամ ընթացքի մեջ գտնվող գործընթացներն ընդգծված են:

1. **ՌԾ 1.2.9. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի ժամերի/ բեռնվածության արդյունավետ օգտագործման և արդյունքների հաշվառման/չափման մեխանիզմների մշակում և ներդրում:**

   Մշակվել է ինքնուրույն աշխատանքի իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության ուսումնասիրության հարցման հարցաշար, որը գտնվում է քննարկման փուլում:

   Մեկ դասընթացի համար մշակվել է ինքնուրույն աշխատանքի համար ուսանողի բեռնվածության բաղադրիչների ցանկ և հաշվարկի նորմեր: Կազմակերպվել է ֆոկուս-խմբով հանդիպում (հոկտեմբերին) տարբեր կրթական ծրագրերի տարբեր կուրսերի ուսանողների հանդիպում, որի ժամանակ ուսանողներին ներկայացվել է մշակված ինքնուրույն աշխատանքների հնարավոր ցանկը և դրանց բեռնվածության հաշվվման ձևը, ապա ուսանողներին հանձնարարվել է մեկ դասընթացի շրջանակներում լրացնել տրամադրված ցանկը՝ նշելով ինքնուրույն աշխատանքների իրականացման համար իրենց ծախսած ժամանակն ըստ շաբաթների: Արդյունքների հավաքագրումը նպատակ ունի պարզելու, թե առաջարկվող համակարգը որքանով է հարմար և արդյունավետ, և որքանով է այն ներկայացնում ուսանողի իրական բեռնվածությունը: <u>Արդյունքները վերլուծման փուլում են:</u> */իրականացնող՝ Ա. Մկրտումյան, Մ.Ճաղարյան/*

2. **ՌԾ 2.1.1. Գիտական գործունեության համակարգման ընթացիկ գործընթացներում բացերը հայտնաբերելու նպատակով իրականացվող ներքին ուսումնասիրություն/գնահատում:**

   Գիտական գործունեության համակարգման, ընթացիկ գործընթացներում բացերը հայտնաբերելու նպատակով (04.25-10.25թթ.) մշակվել է մասնաճյուղում գիտական գործունեության վիճակի, խնդիրների, հնարավորությունների և առաջարկությունների հարցման հարցաշարը և գործիքի անձնագիրը, իրականացվել է բենչմարքինգ հրապարակային բաց գիտության քաղաքականություն ունեցող ՀՀ բուհերում՝ ԵՊՀ, AUA, Բրյուսով, մշակվել է մասնաճյուղի բաց գիտության քաղաքականությունը, <u>որը գտնվում է հաստատման փուլում:</u> Մասնաճյուղում գիտական գործունեության վիճակի վերաբերյալ <u>հարցումն անց կկացվի 2026թ.-ի ապրիլին:</u> */իրականացնող՝ Ա. Մկրտումյան, Գ. Ավետիսյան, Մ.Ճաղարյան/*

3. **ՌԾ 2.4.1 ԵՊՀ ԻՄ հետազոտությունների տեսանելիության բարձրացում՝ հոդվածներ հրապարակելով միջազգային ամսագրերում և մասնակցելով միջազգային գիտաժողովներին:**

   ԵՊՀ ԻՄ դասախոսների համար կազմակերպվել է 2 վերապատրաստման դասընթաց.

- **19.04.2025թ.** իրականացվել է «Գիտաչափական հոդվածների հրապարակման աշխուժացում» թեմայով վերապատրաստման դասընթացը, որին մասնակցել է մասնաճյուղի 9 աշխատակից:
- **2025թ. ապրիլի 26-ից մայիսի 20-ը** կազմակերպվել է «Առաջատար գիտատեղեկատվական շտեմարաններ և դրանցում ընդգրկված ամսագրերում տպագրվելու ընթացքը և պահանջները» վերապատրաստման դասընթացը, որին մասնակցել է ԵՊՀ ԻՄ 17 աշխատակիցներ և դասախոսներ:

Դասընթացների նպատակն է եղել ԵՊՀ ԻՄ դասախոսներին ներկայացնել գիտաչափական հարթակներին, ազդեցության գործոն ունեցող միջազգային հեղինակավոր գիտական պարբերականներում հոդվածներ հրատարակելու կարգը և պայմանները, հոդվածներին ներկայացվող պահանջները, ժամանակակից գիտաչափական հարթակներում գրանցվելու ձևերը*: /իականացնող՝ Ն. Ղազարյան/*

4. **ՌԾ 4.4.1. Մասնավոր ոլորտի գործընկերների համար կորպորատիվ փաթեթների մշակում և առևտրայնացում:**

Մասնավոր ոլորտի գործընկերների համար կորպորատիվ փաթեթների մշակման և առևտրայնացման նպատակով հունիս ամսին մշակվել է մասնավոր հատվածի կարիքների ուսումնասիրության հարցման հարցաշար և տեղադրվել Google ձաչափում, հավաքագրվել է Տավուշի մարզի կազմակերպությունների և ԱՁ-երի էլեկտրոնային հասցեները և հարցաշարն ուղարկվել է համապատասխան էլ.հասցեներին՝ մասնավոր հատվածի կարիքների ուսումնասիրության հարցմանը մասնակցելու համար: Հարցմանը մասնակցած մասնավոր ոլորտի գործընկերների համար մշակվել են կորպորատիվ փաթեթներ: <u>Պլանավորում ենք</u> 2026թ.հունիս–հուլիս ամիսներին <u>իրականացնել վերապատրաստման դասընթացներ</u>: */իրականացնող՝ Ա. Մկրտումյան, Գ. Ավետիսյան/*

5. **ՌԾ 5.3.3. Ֆինանսական գործունեության մշտադիտարկման և գնահատման գործիքակազմի լրամշակում, արդյունքների օգտագործման կանոնակարգում:**

Մշակվել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ֆինանսական գործունեության մշտադիտարկման և գնահատման կարգը», որի նպատակն է ապահովել Մասնաճյուղի ֆինանսական միջոցների օրինական, թափանցիկ, արդյունավետ և նպատակային պլանավորումը, կառավարումը և օգտագործումը: Կարգը քննարկվել է մասնաճյուղի գիտական խորհրդին կից Որակի կառավարման մշտական հանձնաժողովում, ապա հաստատվել է գիտական խորհրդի 27.12.2025թ. նիստում (որոշում թիվ 85/1): */իրականացնող՝ Ն. Ղազարյան, Մ. Ճաղարյան/*

6. **ՌԾ 6.2.1. Շրջանավարտների կոնտակտային տվյալների հավաքագրման գործընթացի բարելավում:**

1) Հավաքագրվել է 2025 թվականի ավարտական կուրսերի ուսանողների տվյալները:

2) «ԵՊՀ ԻՄ շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ կապ» ֆեյսբուքյան էջում պարբերաբար տեղադրվել են հայտարարություններ (շուրջ 69) աշխատանքի վերաբերյալ: «Յունիբանկ» ԲԲԸ Իջևանի կառավարիչի կողմից տեղեկացվել է Դիլիջանի Մոբայլ սենթրում առկա թափուր հաստիքի մասին, տեղեկացվել են ավարտական կուրսի ուսանողները և այլ թվականների ավարտած շրջանավարտները:
3) 2024 – 2025 թթ. «Զբոսաշրջություն», «Ֆինանսներ», «ԻԿՄ», «ՀԼԳ», «ԱԼԳ», «ՖԼԳ», «ՌԼԳ» մասնագիտության շրջանավարտների էլեկտրոնային հասցեներին է ուղարկվել Իջևանի «Յուքոմ» ՓԲ ընկերությունում առկա թափուր հաստիքի մասին տեղեկատվություն:
4) 2023-2025 թթ. շրջանավարտների էլեկտրոնային հասցեներին է ուղարկվել Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա ընկերության կողմից առաջարկված թափուր հաստիքի վերաբերյալ հայտարարությունը:
5) 2025 – 2018 թթ. «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության շրջանավարտները զանգի միջոցով տեղեկացել են «ԱՅԲ» դպրոցում առկա ֆրանսերեն լեզվի ուսուցչի աշխատանքի համար:
6) Մեր ուղղորդմամբ աշխատանքի է տեղավորվել 4 շրջանավարտ:
7) Էլեկտրոնային հասցեով աշխատանքի վերաբերյալ նամակներ է ուղարկվել ԱԼԳ մասնագիտության 2017 – 2025 թթ. շրջանավարտներին:
8) Էլեկտրոնային շտեմարանում լրացվել է 2025 թվականի շրջանավարտների տվյալները: Խմբագրվել է «Հոգեբանություն» մասնագիտության շրջանավարտների տվյալները էլեկտրոնային շտեմարանում:
9) Էլեկտրոնային շտեմարում թարմացվել է 2020-2024 թվականների շրջանավարտների տվյալները:
10) Շրջանավարտների համար 30.05.2025թ. բացվել է Տելեգրամյան ալիք, իսկ մասնաճյուղի համար՝ մեկ ինստագրամյան հարթակ: /իրականացնող՝ Է.Ղարայան/

7. ՌԾ 6.2.2-Շրջանավարտների համայնքի իրազեկման և ներգրավման ձևաչափերի մեխանիզմների լրամշակում և գործարկում:

Շրջանավարտների հետ հետադարձ կապ պահելու համար կազմվել է հարցաթերթիկ: */իրականացնող՝Է.Ղարայան/*

Մշակվել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների իրազեկման և ներգրավման քաղաքականությունը», որի նպատակն է ապահովել **շրջանավարտների համակարգված** իրազեկումը և ներգրավումը Մասնաճյուղի գործունեությանը: Կարգը քննարկվել է մասնաճյուղի գիտական խորհրդին կից Որակի կառավարման մշտական հանձնաժողովում, ապա ներկայացվել է գիտական խորհուրդ՝ հաստատման (կարգը հաստատվել է ԳԽ 07.03.2025թ. նիստում): */իրականացնող՝ Ն.Ղազարյան, Մ.Ճաղարյան/*

8. **ՌԾ 6.3.1. Գործընկեր լրատվամիջոցների հետ համագործակցությամբ տեղեկատվական նախագծերի իրականացում:**

Համագործակցությամբ «Առավոտ լուսո» հաղորդաշարի հաղորդավար Անուշ Խաչատրյանի հետ եթեր է թողարկվել ԵՊՀ ԻՄ երկու տաղանդավոր շրջանավարտի վերաբերյալ հաղորդում։ */իրականացնող՝ Ա. Մկրտումյան, Է. Ղարայան/*

Մշակվել է տեղեկատվության հրապարակման և հանրությանը իրազեկման ընթացակարգը և վերանայվել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում։ Փաստաթղթերը քննարկվել են նաև ՏՀՍԶ բաժնի հետ, այժմ **<u>վերջնական խմբագրման փուլում են</u>**, որից հետո կուղարկվեն ԳԽ հաստատման*։ /իրականացնող՝ Ա. Մկրտումյան, Մ. Ճաղարյան/*

9. **6.3.2. ԵՊՀ ԻՄ կայքի և սոցիալական հարթակներում պաշտոնական էջերի տեսանելիության ավելացում։**

Հավաքագրվել և ամփոփվել են ԵՊՀ ԻՄ պաշտոնական կայքէջում և սոցիալական հարթակներում մասնաճյուղի գործունեության վերաբերյալ տեղադրվող տեղեկատվության հասանելիության և արդիականության վերաբերյալ ուսանողների, շրջանավարտների և աշխատակազմի կարծիք-գնահատականները։

Մանրամասն վերլուծվել են մասնաճյուղի ֆեյսբուքյան էջի, ինստագրամյան հարթակի և տելեգրամյան ալիքի տեսանելիության վիճակագրական տվյալները 2025թ.-ի նոյեմբեր ամսվա համար։ Վերլուծության մեջ կատարվել են դրանց բովանդակության բարելավման, հոդվածների արդյունավետության բարձրացման և ռազմավարական մոտեցման համար առաջարկներ։ Վերլուծությունն ուղարկվել է մասնաճյուղի Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման բաժին՝ առաջարկությունների հնարավոր կիրարկման համար։ Նմանատիպ վերլուծություն կիրականացվի պարբերաբար, յուրաքանչյուր եռամսյակի ավարտին։

Մշակվել է ԵՊՀ ԻՄ պաշտոնական կայքէջում և սոցիալական էջերում տեղադրվող տեղեկատվության հասանելիությունից և արդիականությունից հասարակության բավարարվածության հարցման հարցաշար, որը քննարկվել է նաև ՏՀՍԶ բաժնի հետ։ **<u>Հարցումն առայժմ չի իրականացվել</u>**։ /իրականացնող՝ Մ. Ճաղարյան/

10. **ՌԾ 6.4.1. Թիրախային ծրագրեր՝ Արցախից բռնի տեղահանվածների համար։**

Գրասենյակների աշխատակիցների հետ համագործակցությամբ հավաքագրվել են խոցելի խմբի ուսանողների տվյալները։ Իրականացվել է Արցախից բռնի տեղահանված ուսանողների կարիքների գնահատում և հավաքագրված տվյալների վերլուծություն։ */իրականացնող՝ Է. Ղարայան/*

11. **ՌԾ 6.4.2. Թիրախային ծրագրեր՝ սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչների համար։**

Փետրվար և մարտ ամիսներին մշակվել է սոցիալապես խոցելի խմբերի և Արցախից բռնի տեղահանված ուսանողների կրթական, սոցիալական և մասնագիտական **<u>աջակցության ծրագիր (գտնվում է քննարկման փուլում</u>**)։ Տեղեկատվության ստացման համար ԿԲՈԱ բաժինը համագործակցել է ուսումնամեթոդական վարչության և ֆակուլտետների դեկանների հետ, հավաքագրված տվյալների հիման վրա անհատական հարցազրույցների և թղթային հարցաթերթիկների միջոցով իրականացվել է ԵՊՀ ԻՄ սոցիալապես խոցելի և Արցախից բռնի

տեղահանված ուսանողների կարիքի գնահատում: Ելնելով նշված ուսանողների կարիքի գնահատման արդյունքներից՝ ԿԲՈԱ բաժինը «ՍՕՍ-Մանկական գյուղեր» ՀԿ-ի հետ համագործակցությամբ 7 ուսանողի ուղղորդել է «Երիտասարդների հզորացում» ծրագրին՝ ապահովելով աջակցության գործընթաց, 2 ուսանողի՝ «Հանուն իրավահավասարության» իրավապաշտպան ՀԿ-ի և «Տահույս» սոցիալ-կրթական ՀԿ-ի ծրագրերին՝ ստանալով տնտեսական հզորացման աջակցություն, մեկ ուսանողի ընտանիք, որն ունի բազմակողմանի աջակցության կարիք (հոգեբանական, սոցիալական, կրթական և տնտեսական), նույնպես ուղղորդվել է համապատասխան ծրագրերի: */իրականացնող՝ Գ. Ավետիսյան, Է. Ղարայան/*

12. **ՌԾ 6.4.3 ԵՊՀ ԻՄ համայնքի համար ներքին սոցիալականացման, ժամանցի և ինքնազարգացման հնարավորությունների ընդլայնում**

Մշակվել է աշխատակազմի կարիքների ուսումնասիրության հարցման հարցաշարը: 2025թ.-ի դեկտեմբերին իրականացվել է հարցումը և կատարվել է հավաքագրված տվյալների վերլուծություն (2026թ. փետրվար)*:* Վերլուծության մեջ մանրամասն ներկայացվել են աշխատակիցների աշխատանքային գործունեության, մասնաճյուղում գործընթացների կազմակերպման, աշխատակազմի սպասարկման և այլ հարցերի հետ կապված խնդիրները, առանձնացվել են նրանց առաջարկները: Այդ **<u>արդյունքները կքննարկվեն</u>** **<u>մասնաճյուղի տնօրենության հերթական</u>** <u>նիստում՝</u> հավաքագրված խնդիրների վերաբերյալ լուծումներ առաջարկելու համար: */իրականացնող՝ Է. Ղարայան, Մ. Ճաղարյան/*

<u>Մշակման փուլում է գտնվում</u> ԵՊՀ ԻՄ աշխատակազմի ինքնաիրացման և ժամանցի հնարավորությունների փաթեթը, որի նպատակն է աշխատակազմի մասնագիտական աճի, անձնական զարգացմանը միտված գործունեության և առողջ աշխատանքային միջավայրի ապահովումը:

13. ***ԿԲՈԱ բաժնի կողմից իրականացված ընթացիկ գործընթացները և ձեռք բերված արդյունքները.***

1) **Հունվարին** դուրս են գրվել 2024-25 ուստարվա 2-րդ կիսամյակի առկա և հեռակա ուսուցման դասընթացների բաղադրիչները և տրամադրվել են ֆակուլտետներին և ամբիոններին: */իրականացնող՝ Ա. Մկրտումյան/*

2) **Փետրվարին** հավաքագրվել են 2024-25 ուստարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման հետազոտական աշխատանքների կատարողականի վերաբերյալ արդյունքները, կազմվել է հաշվետվություն: Արդյունքները ներկայացվել և քննարկվել են 28.01.2025թ. տնօրենության նիստում: */իրականացնող՝ Ա. Մկրտումյան/*

3) **Փետրվարին** անց է կացվել 2024-25 ուստարվա 1-ին կիսամյակի հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից 4-րդ կուրսի ուսանողների բավարարվածության հարցումը և իրականացվել է հարցման արդյունքների վերլուծություն: Գնահատման 5 միավորանոց համակարգում հետազոտական աշխատանքի իրականացումից ուսանողների բավարարվածությունը ֆակուլտետներում տատանվել է **4.4 – 4.8** **(նախորդ**

ուստարի՝ 4.3 - 4.9), մասնաճյուղում բավարավածության միջին գնահատականը կազմել է **4.6 (նախորդ ուստարի՝4.5)**: Ընդհանուր առմամբ արդյունքը գահացնող է և փաստում է մասնաճյուղի հետևողական և բարձր մակարդակի գործունեությունը: Հետազոտական աշխատանքների իրականացման ընթացքում ուսանողների մի մասը բախվել է մի շարք տեղեկատվական սահմանափակումների, մասնավորապես՝ անհրաժեշտ տեսական նյութերի և գրականության դժվար հասանելիությունը և հայալեզու գրականության և նյութերի սակավությունը*: /իրականացնող՝ Գ. Ավետիսյան/*

4) Մարտ ամսին ուսումնասիրվել է ՀՀ և Տավուշի մարզի աշխատաշուկայի զարգացման միտումները, պահանջարկը և կատարվել վերլուծություն: ՀՀ աշխատաշուկան վերլուծելու ժամանակ ուսումնասիրվել է 4 ենթաբաժին. 1.ամենապահանջված մասնագիտությունները ՀՀ-ում, 2.մարզային ակտիվություն, մարզային հաստիքներ, 3.աշխատաշուկայի մակրոտնտեսական ցուցանիշներ և աշխատավարձի ուսումնասիրություն, 4.նեղ մասնագիտական (5 ամենաակտիվ) ոլորտների ուսումնասիրություն: **Ամենապահանջված մասնագիտությունները** ենթաբաժնում ուսումնասիրվել է 2024թ. ամենապահանջված 20 մասնագիտական ոլորտները և համեմատվել 2023թ. հետ: Ըստ ուսումնասիրության բանկային ոլորտը ամենաակտիվն է եղել հավաքագրման առումով, ինչը վկայում է նաև «Բանկային և վարկային գործ» մասնագիտության պահանջարկի շարունակական աճի մասին, **մարզային ակտիվություն, մարզային հաստիքներ** ենթաբաժնում ուսումնասիրվել է ՀՀ մարզերում ամենապահանջված մասնագիտությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ամենամեծ մասնաճյուղերի ցանցը մարզերում ունեն բանկերն ու վարկային կազմակերպությունները, ամենամեծ պահանջարկը վերագրվում է հենց բանկային և վարկային մասնագետներին, **աշխատաշուկայի մակրոտնտեսական ցուցանիշներ և աշխատավարձի ուսումնասիրություն** ենթաբաժնում ուսումնասիրվել է միջին ամսական աշխատավարձի աճի դինամիկան 2018-2024թթ. ժամանակահատվածում: Հատկաշնական է, որ 2018թ.-ից ի վեր աշխատավարձի ամենափոքր աճը գրանցվել է 2024թ.-ին: Սա կարող է մասամբ պայմանավորված լինել նաև բարձր վարձատրվող այլազգի SS մասնագետների ՀՀ-ից այլ երկրներ տեղափոխվելով: Նեղ մասնագիտական (5 ամենաակտիվ) ոլորտների ուսումնասիրություն ենթաբաժնում ուսումնասիրվել է ՀՀ-ում 5 ամենաակտիվ ոլորտները. 1.տեղեկատվական տեխնոլոգիաներ, 2.ֆինանսաբանկային ոլորտ, 3.հեռահաղորդակցութուն, 4.առևտրի ոլորտ, 5. արտադրության ոլորտ:
ԿԲՈԱ բաժնի կողմից առանձին ուսումնասիրվել է նաև Տավուշի մարզի աշխատաշուկան: Ըստ վերլուծության արդյունքների Տավուշի մարզի աշխատաշուկայի պահանջարկը հիմնականում կապված է մարզի տնտեսության գլխավոր ոլորտների՝ գյուղատնտեսության, զբոսաշրջության և ծառայությունների աճի հետ, մարզի աշխատաշուկան պահանջում է հիմնականում բարձրակարգ մասնագետներ **տեխնիկական, ֆինանսական, գյուղատնտեսական և զբոսաշրջային** ոլորտներում: */իրականացնող՝ Ավետիսյան/*

5) Մայիս ամսին իրականացվել է 2024-25 ուստարվա 1-ին կիսամյակի հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից 3-րդ կուրսի ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների վերլուծություն: Գնահատման 5 միավորանոց համակարգում հետազոտական աշխատանքի իրականացումից ուսանողների բավարարվածությունը ֆակուլտետներում տատանվել է **4.4 – 4.9** **(նախորդ ուստարի՝ 4.3 - 4.9),** մասնաճյուղում բավարավածության միջին գնահատականը կազմել է **4.5** **(նախորդ ուստարի՝4.5):** Ընդհանուր առմամբ արդյունքը գոհացնող է և փաստում է մասնաճյուղի հետևողական և բարձր մակարդակի գործունեությունը: Հետազոտական աշխատանքների իրականացման ընթացքում ուսանողների մի մասը բախվել է մի շարք խնդիրների: Առավել հաճախ նշված խնդիրները վերաբերում են հայերեն մասնագիտական գրականության և տեղեկատվության սակավությանը, վստահելի և հստակ աղբյուրների դժվար հասանելիությանը, վերլուծության, եզրակացությունների ու մեթոդական ձևակերպումների մշակման բարդությանը, ինչպես նաև ժամանակի արդյունավետ կառավարմանը: Հարցման արդյունքները ներկայացվել են գիտական խորհրդի 10.06.2025թ.-ի թիվ 81 նիստում: */իրականացնող՝ Գ. Ավետիսյան, Ա. Մկրտումյան/*

6) 2025թ.-ի մայիսին իրականացվել է բակալավրի առկա ուսուցման շրջանավարտների և հեռակա «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտների «ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության» առցանց հարցումը: Հարցման արդյունքները վերլուծվել են և ներկայացվել գիտական խորհրդի 22.07.2025թ.-ի թիվ 82 նիստում:

Հարցման արդյունքները մշակվել և ընդհանրացվել են ըստ ֆակուլտետների, ըստ կրթական ծրագրերի և գիտխորհրդի անդամներին են ներկայացվել միջին գնահատականներով կամ տոկոսներով: Գրանցվել են առցանց հարցումների տեսանկյունից մասնակցության բարձր ցուցանիշներ և այդ ֆոնի վրա նաև գրանցվել են բավարարվածության բարձր ցուցանիշներ, որով շրջանավարտներն արտահայտել են իրենց բավարարվածությունը մասնաճյուղում ստացած կրթությունից, ուսումնական գործընթացի կազմակերպումից և իրականացումից, պրակտիկաների կազմակերպումից, մատուցվող ծառայություններից և ռեսուրսներից, համալսարանական միջավայրից, գնահատման գործող համակարգից, գնահատման օբյեկտիվությունից և այլն: Բակալավրիատում հարցման մասնակից շրջանավարտների 94.4%-ը նշել է, որ խորհուրդ կտա իր մերձավորներին կրթություն ստանալ ԵՊՀ ԻՄ-ում, իսկ մագիստրատուրայում՝ շրջանավարտների 95%-ը:

Շրջանավարտների կողմից մասնաճյուղի համար նշված ուժեղ կողմերից են կրթության բարձր որակը, պրոֆեսիոնալ դասախոսական կազմը՝ օժտված հիանալի մարդկային որակներով, ղեկավարության սրտացավությունը, ուսանողակենտրոն մոտեցումը, վարձավճարների մատչելիությունը և այլն: */իրականացնող՝ Է. Ղարայան/*

7) 2025թ. մայիս և հունիս ամիսներին հավաքագրվել և վերլուծվել է ԵՊՀ ԻՄ-ի՝ 2024-2025 ուստարվա առկա և հեռակա ուսուցման շրջանավարտների վերաբերյալ ամփոփիչ

ատեստավորման հանձնաժողովների կարծիք-հաշվետվությունները։ 2024-2025 ուստարվա առկա ուսուցմամբ ամփոփիչ ատեստավորումը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում իրականացվել է 11 մասնագիտության 12 կրթական ծրագրով. «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Դիզայն», «Դեկորատիվ-կիրառական արվեստ», «Պատմություն», «Հոգեբանություն», «Հայոց լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Զբոսաշրջություն», «Ֆինանսներ», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և հեռակա ուսուցմամբ՝ 11 մասնագիտության 7 կրթական ծրագրով. «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Պատմություն», «Հոգեբանություն», «Զբոսաշրջություն», «Ֆինանսներ», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Հայոց լեզու և գրականություն»։

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կարծիք-հաշվետվությունները կարևոր դեր են խաղում կրթական գործընթացի որակի վերահսկման և վերլուծության գործում՝ ծառայելով որպես հիմք կրթական ծրագրերի բարելավման, ուսանողական առաջընթացի գնահատման և մասնագիտական պատրաստվածության բարձրացման համար։ Արդյունքները ներկայացվել են 06.03.2026թ.-ի տնօրենության նիստում։ */իրականացնող՝ Ավետիսյան/*

8) Հունիսին իրականացվել է բակալավրի հեռակա ուսուցման շրջանավարտների և «Գործարար վարչարարություն (կառավարում)» հեռակա մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտների «ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության» առցանց հարցումը։ Հարցման արդյունքները վերլուծվել են և ներկայացվել 06.03.2026թ. տնօրենության նիստում։ /իրականացնող Է.Ղարայան/

9) 2025թ.-ի հունվարից մայիս ամիսներին կազմակերպվել և իրականացվել է 2025-2029 առկա 12 և 2025-2030 հեռակա 5 ուսուցման բակալավրի և 2025-2027 հեռակա ուսուցման 2 մագիստրատուրայի կրթական ծրագրերի վերանայման գործընթացը։ Վերանայված ծրագրերը հաստատվել են գիտական խորհրդի 22.07.2026թ.-ի թիվ 82 նիստում։ */իրականացնող՝ Ա. Մկրտումյան/*

10) Հունիսին հավաքագրվել են 2024-25 ուստարվա 2-րդ կիսամյակի առկա և հեռակա ուսուցման հետազոտական աշխատանքների կատարողականի վերաբերյալ արդյունքները, կազմվել է հաշվետվություն։ */իրականացնող՝ Ա. Մկրտումյան/*

11) Հունիս - 2024-25 ուստարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման հետազոտական աշխատանքների արդյունքների կատարողականի հաշվետվություն։ */իրականացնող՝ Ա. Մկրտումյան/*

12) Սեպտեմբերին հավաքագրվել են ԵՊՀ ԻՄ ստորաբաժանումներից գործունեության արդյունքային ցուցանիշները և հավաքագրված արդյունքների հիման վրա հոկտեմբեր-

նոյեմբեր հավաքագրված տվյալների հիման վրա կատարվել է ձեռքբերված արդյունքների վերլուծություն, լրամշակվել է ԳԱՑ-2020-25: */իրականացնող՝ Ավետիսյան/*

13) Հոկտեմբերին իրականացվել է «Վարչական և ուսումնաօժանդակ աշխատողների բավարարվածությունը մասնաճյուղից» առցանց հարցում աշխատակիցների հետ: Ըստ հարցման արդյունքների աշխատակիցների ընդհանուր բավարարվածությունը Մասնաճյուղի ռեսուրսներից և ծառայություններից բարձր է՝ միջին գնահատականները տատանվում են **4.3–4.9** միջակայքում, իսկ տոկոսային ցուցանիշները՝ **85.6%–97.3%**: Բարձր ցուցանիշները վկայում են այն մասին, որ աշխատակիցները հիմնականում դրական են գնահատում մասնաճյուղի նյութատեխնիկական ապահովվածությունը, աշխատանքային միջավայրը, ծառայությունների որակը և աջակցման մեխանիզմները: */իրականացնող՝ Գ. Ավետիսյան, Է. Ղարայան/*

14) Իրականացվել են 2025թ.-ի Մասնաճյուղի ռազմավարական գործունեության պլանավորման, մոնիթորինգի և հաշվետվությունների կազմման հետ կապված բոլոր գործընթացները:

Ստորաբաժանումների լրացրած տվյալների հիման վրա կազմվել է 2025թ.-ի հունվարից դեկտեմբեր ամիսների համար ամփոփ փաստաթուղթ՝ նշելով յուրաքանչյուր գործողության համար ստորաբաժանումների ձեռք բերած արդյունքները:

Նոյեմբերին կազմակերպվել է մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության հաշվետվությունների հավաքագրման գործընթացը: Հավաքագրված տվյալների հիման վրա կազմվել է մասնաճյուղի 2024-25 ուստարվա գործունեության տնօրենի հաշվետվությունը, որը ներկայացվել է գիտական խորհրդի 13.01.2026թ.-ի թիվ 85-ում նիստում: */իրականացնող՝ Մ. Ճաղարյան/*

Նշված բացթողումները, անավարտ մնացած գործընթացները ավարտին հասցնելու համար համապատասխան գործողությունները ներառվել են բաժնի 2026թ.-ի գործողությունների պլանի մեջ: